35

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԿԱՅԱԿԱՆ
ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

Սույն վկայականով հաստատվում է «24» Հոկտեմբերի 2014 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ (ՆԵՐ)

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Շիրակ, համայնք Գյումրի ք. Երկ/գծի 40/4 լոկոմոտիվային դեպոյի ջերմաքարշային արտադրամասի ավտոարգելակման բաժնի շենք

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Անշարժ գույքի նվիրաբերության պայմանագիր՝ 28.08.2014թ. թիվ 8774, Գյումրի համայնքի ղեկավարի 15.10.2014թ. թիվ 2082-Ա որոշում

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 08-001-0534-0009

Մակերեսի չափը (հա)՝ 0.011481

Նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման եւ այլ արտադրական նշանակության

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Արդյունաբերական օբյեկտների

Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

1) Նպատակային նշանակությունը՝ Արտադրական

2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/հ	Կադաստրային ծածկագիրը	Տեսակը	Մակերեսի չափը	Գրանցված իրավունքի տեսակը
1	**08-001-0534-0009-001**	**Ավտո-արգ. շենք**	**85.32 ք.մ.**	**ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ Մարատ Կարաքեշիշյան

զբաղեցրած պաշտոնը՝ Շիրակի մարզային ստորաբաժանման անշարժ գույքի ռեգիստր

ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի՝ վկայականը տրամադրող ապասարկման գրասենյակի

Կ.Տ.



ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

Սեփականատեր Անդրանիկ Մանուկյան

Պատվիրատու

Շիրակի մարզ, Գյումրի Համայնք, Երկաթգծի N 40/4

Մարզ, համայնք, հասցե

Հողահատկացման հիմքը


Չև 1

Հաստատում եմ 15.03.2026թ.

Համայնքի ղեկավարի փոխարինող Կ.Տ.

Գ Մանուկյան

անուն, ազգանուն, հայրանուն



Մակերես հա	0.011481 հա
Ծածկագիր	08-001-0534-0009
Նպատակային նշանակություն	Բնակավայրերի
Գործառնական նշանակություն	Բնակելի կառուցապատման

Լրացուցիչ նշումներ

Հողամասի

Շրջադարձային (բեկման) կետեր	Կոորդինատներ		Գծային չափերը (մ)
	Y	X	
1	4517954.94	8404098.28	
2	4517954.14	8404100.11	2.00
3	4517955.05	8404100.52	1.00
4	4517951.48	8404108.66	8.90
5	4517941.50	8404104.28	10.90
6	4517945.07	8404096.13	8.90
7	4517945.99	8404096.53	1.00
8	4517946.79	8404094.70	2.00
1	4517954.94	8404098.28	8.90

Մասշտաբ 1:500

Որակավորում ունեցող անձ	Գրիգոր Ավետիսյան
Որակավորման վկայականի համարը	016
Ստորագրություն	
Իրավաբանական անձի անվանումը	<<Ս ՖՈՈՄԱՏ ՍԹԱՅԼ>> ՍՊԸ
ՀՎՀՀ	5538206
Ստորագրություն	
ամիս ամսաթիվ — հանութագրման	
ամիս ամսաթիվ — հատակագծի կազմման	02.2026

Կ.Տ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«24» մարտի 2016 թվական N 52-Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՊՈՂՈՍԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 3-ի «Գույք նվիրաբերելու, ամրացնելու և շահագործման համար ոչ պիտանի անշարժ գույքը քանդելու մասին» N 405-Ա որոշման 8-րդ կետի պահանջները և «Հարավկովկասյան երկաթուղի» փակ բաժնետիրական ընկերության Գյումրու լոկոմոտիվային դեպոյի պետի 2016 թվականի հունվարի 21-ի N 1 տեղեկանքն ու քաղաքացի Անդրանիկ Պողոսի Մանուկյանի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված՝ 2016թվականի հունվարի 11-ին N 70 թվագրմամբ)՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 24102014-08-0023) Գյումրի քաղաքի Երկաթ/գծի N 40/4 հասցեի լոկոմոտիվային դեպոյի ջերմաքարշային արտադրամասի ավտոարգելակման բաժնի 85,32 (ութսունհինգ ամբողջ երեսուներկու հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով շենքը և դրա պահպանման ու սպասարկման համար հատկացված 0,011481 (զրո ամբողջ տասնմեկ հազար չորս հարյուր ութսունմեկ միլիոներորդական) հեկտար մակերեսով հողամասը (կադաստրային ծածկագիր 08-001-0534-0009) բնակվելու նպատակով, անհատույց սեփականության իրավունքով հանձնել այնտեղ բնակվող քաղաքացի Անդրանիկ Պողոսի Մանուկյանի ընտանիքին:
2. Սահմանել, որ սեփականության իրավունքի անհատույց փոխանցման մասին պայմանագրի նոտարական վավերացման և գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված ծախսերը ենթակա են իրականացման քաղաքացի Անդրանիկ Պողոսի Մանուկյանի միջոցների հաշվին:

Կողմ (15) **Դեմ (0)** **Ձեռնպահ(0)**

Ա. Ադամյան
Գ. Ադամյան
Ա.Բաղրամյան
Մ. Գաբոյան
Ա.Գրիգորյան
Վ.Եդիգարյան
Հ.Խաչատրյան
Տ.Հովհաննիսյան
Վ. Հունանյան
Ն.Մեսրոպյան
Ռ.Մխիթարյան
Է.Մկրտչյան
Վ.Շիրինյան
Մ.Սահակյան
Տ. Փանոսյան

ԻՍԿԱԿԱՆԻ ՀԵՏ ՃԻՇՏ Է՝
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **Ռ. ԱՍԱՏՐՅԱՆ**

Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

24 մարտի 2016թ.
ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«10» սեպտեմբերի 2025 թվականի N 2084-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԵՐԿԱԹ/ԳԾԻ N 40/4 ՀԱՍՑԵԻ 114,81 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՇԻՐԱԿ-4 ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԱԼ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՀԱՏԱԿԱԳԾԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՆԵԼՈՒ ԵՎ 85,32 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԼՈԿՈՄՈՏԻՎԱՅԻՆ ԴԵՊՈՅԻ ՋԵՐՄԱՔԱՐՇԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՄԱՍԻ ԱՎՏՈՐԱԳԵԼԱԿՄԱՆ ԲԱԺՆԻ ՇԵՆՔԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող Երկաթ/գծի N 40/4 հասցեի լոկոմոտիվային դեպոյի ջերմաքարշային արտադրամասի ավտոարգելակման բաժնի 85,32 (ութսունհինգ ամբողջ երեսուներկու հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով շենքը և դրա պահպանման ու սպասարկման համար հատկացված 114,81 (մեկ հարյուր տասնչորս ամբողջ ութսունմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը բնակվելու նպատակով նվիրաբերվել է քաղաքացի Անդրանիկ Պողոսի Մանուկյանին (հիմք՝ Հայաստանի Հանրապետության Կառավարության 03 ապրիլի 2014 թվականի N 405-Ա որոշում):

Քաղաքացի Անդրանիկ Մանուկյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին իրեն նվիրաբերած Գյումրի քաղաքի Երկաթ/գծի N 40/4 հասցեի 114,81 (մեկ հարյուր տասնչորս ամբողջ ութսունմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը փոփոխելու միջոցով Գյումրի քաղաքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերին համապատասխանացնելու և Գյումրի քաղաքի Երկաթ/գծի N 40/4 հասցեի 85,32(ութսունհինգ ամբողջ երեսուներկու հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով լոկոմոտիվային դեպոյի ջերմաքարշային արտադրամասի ավտոարգելակման բաժնի շենքի գործառնական նշանակությունը՝ որպես բնակելի տուն փոփոխելու խնդրանքով:

Նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Շիրակ-4 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթում ներառնված Գյումրի համայնքի ավագանու 2022 թվականի հունիսի 22-ի N 124-Ա որոշմամբ հաստատված Գյումրի քաղաքի գլխավոր հատակագծի հեռանկարային զարգացման գծագրով վերոհիշյալ հողամասը հանդիսանում է բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր գործառնական նշանակության հողամաս և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին պարբերության 1-ին մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ մասով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետի, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2002թ. փետրվարի 2-ի թիվ 88 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում շենքերի, շինությունների կամ դրանց մի հատվածի գործառնական նշանակությունը փոփոխելու կարգի» և հիմք ընդունելով Անդրանիկ Մանուկյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2025 թվականի օգոստոսի 25-ին N 12279 թվագրմամբ).

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գյումրի քաղաքի Երկաթ/գծի N 40/4 հասցեի 114,81 (մեկ հարյուր տասնչորս ամբողջ ութսունմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը փոփոխելու միջոցով համապատասխանացնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Շիրակ-4 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման հատակագծին, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման:

2. Փոփոխել Գյումրի քաղաքի Երկաթ/գծի N 40/4 հասցեի 85,32(ութսունհինգ ամբողջ երեսուներկու հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով լոկոմոտիվային դեպոյի ջերմաքարշային արտադրամասի ավտոարգելակման բաժնի նպատակային նշանակությունը արտադրականից բնակելիի, իսկ գործառական նշանակությունը՝ որպես բնակելի տուն:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում իրավական ակտի ընդունման մասին Անդրանիկ Մանուկյանին պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից:
4. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ

ԻՍԿԱԿԱՆԻ ՀԵՏ ՃԻՇՏ Է
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ **Կ.ՄԱԼԽԱՍՅԱՆ**

ք.Գյումրի 2025թ.